



Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի

2013-2014թթ

### **Գործունեության հաշվետվություն**

Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտը ստեղծվել է 2013թ. մարտ ամսին և ակտիվ գործունեություն է ծավալել ապրիլ ամսից:

Մինչ դա Հայաստանում իրականացվել են բազմաթիվ ուսումնասիրություններ երիտասարդների վերաբերյալ՝ կրթության, աշխատաշուկայի, միգրացիայի, կոռուպցիայի ընկալումների, վերարտադրողական վարքի թեմաներով: Ավելին, 2008թ, 2011թ և 2012թ իրականացվել են լայնածավալ հետազոտություններ և տպագրվել են Երիտասարդության ազգային զեկույցներ՝ «Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցի», «Երիտասարդների ձգտումների հետազոտության» վերլուծություն: Իսկ արդեն 2013թ. Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոնում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աջակցությամբ ստեղծվել է Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտը:

Ինստիտուտի կանոնադրական նպատակներն են պարբերաբար իրականացնել հետազոտություններ երիտասարդության շրջանում՝ նպաստելով փաստարկված երիտասարդական քաղաքականության մշակմանը: Ինստիտուտի հիմնական գործառույթն է համապարփակ ուսումնասիրությունների իրականացման միջոցով երիտասարդության շրջանում առաջնային լուծում պահանջող հիմնախնդիրների բացահայտումը, ծրագրային առաջարկների մշակումը և դրանց լուծումը, երիտասարդության ոլորտում հիմնավորված և հետևողական պետական քաղաքականություն իրականացնելու նպատակով երիտասարդության շրջանում պարբերաբար ուսումնասիրությունների և հետազոտությունների իրականացումը: Մինևույն ժամանակ, Ինստիտուտը նպատակ ունի դառնալու հետազոտական/ակադեմիական կենտրոն, գիտելիքի ձևավորման և միջնորդման հանգույց, նաև հետազոտությունների, վերլուծության, բանավեճերի և մշտադիտարկման միջոցառումներին երիտասարդներին ներգրավելու պլատֆորմ՝ դիտվելով որպես արդիական գործիքների և տեխնոլոգիաների օրինակ, կառուցողական մտածողության

օթևան, որը կոչված է գորացնել երիտասարդական խմբերին՝ Հայաստանում քաղաքականության ձևավորմանը և իրականացմանը նրանց ներգրավելու նպատակով:

Ինստիտուտը ծավալում է գործունեություն հետևյալ **ուղղություններով՝**

- Նպաստել **փաստարկված երիտասարդական պետական քաղաքականության** մշակմանը՝ պարբերաբար իրականացնելով երիտասարդական ուսումնասիրություններ և խթանելով երիտասարդության մասնակցությանը երիտասարդական պետական քաղաքականության մշակման գործընթացներին

Այս ուղղությամբ 2013-2014թթ իրականացվել են հետևյալ **գործողությունները.**

2013թ. Ինստիտուտը իրականացրել է «**ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները**» հետազոտությունը, որի արդյունքները տպագրվել են հայերեն և անգլերեն զեկույցների տեսքով: Ջեկույցը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրների ընդհանուր բնութագիրը, կրթական համակարգի և աշխատաշուկայի փոխկապակցվածությունը, ինչպես նաև անդրադարձ է կատարվել հաշմանդամություն ունեցող երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրներին: Տվյալ հետազոտության շրջանակներում Ինստիտուտի կողմից մշակված մեթոդաբանության հիման վրա իրականացվել է երիտասարդների անկախության ինդեքսի չափում, որի արդյունքները նույնպես առկա են զեկույցում: Ուսումնասիրությունը իրականացվել է Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի կողմից ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի և ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աջակցությամբ 2013 թ.-ի Հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Նշենք, որ այս հետազոտության շրջանակներում իրականացվել են հարցումներ մոտ 1500 երիտասարդի և 100 գործատուի շրջանում, ընդ որում առաջին անգամ երիտասարդական ուսումնասիրությունների ընտրանքում առանձին ներգրավվել են հաշմանդամություն ունեցող երիտասարդները:

Մինչ հետազոտության արդյունքների վերջնական ամփոփումը և զեկույցի տպագրությունը, Ինստիտուտը իրականացրել է **վալիդացիոն** հանդիպումներ երիտասարդների տարբեր խմբերի հետ՝ նպատակ ունենալով ճշգրտել և որոշակի հստակեցումներ մտցնելու հետազոտության արդյունքների մեկնաբանության մեջ: Իրականացվել են 3 վալիդացիոն հանդիպումներ:

2014թ. դեկտեմբեր ամսին հետազոտության արդյունքները հանրայնացվել են՝ շահագրգիռ կողմերին ներկայացվել են հետազոտության արդյունքները, զեկույցները բաշխվել են, իսկ օնլայն տարբերակները տեղադրվել են Ինստիտուտի կայքէջում՝ :

2014թ. Ինստիտուտը իրականացրել է «**Երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրում եւ պետության կողմից ֆինանսավորվող երիտասարդական դրամաշնորհային ծրագրերի արդյունավետության գնահատում**» հետազոտական ծրագիրը: Հետազոտությունը անդրադարձել է երիտասարդական հասարակական կազմակերպությունների իրականացրած ծրագրերի ուղղություններին, ինչպես նաև նրանց կարիքների վերհանմանը: Հետազոտության շրջանակներում գնահատվել են

օնլայն դրամաշնորհային համակարգով իրականացված ծրագրերը: Հետազոտությանը մասնակցել են մոտ 370 հասարակական կազմակերպություն, ինչպես նաև ոլորտի 15 փորձագետ:

Հետազոտության արդյունքները հանրայնացվել են 2015թ.մարտ ամսին: Զեկույցը տեղադրվել է Ինստիտուտի կայքէջում:

Նպատակ ունենալով նպաստել ՀԿ-ների միջև համագործակցությունը հետազոտությանը մասնակցած բոլոր հասարակական կազմակերպությունների տվյալները տեղադրվել են Ինստիտուտի կայքէջում՝ ՀԿ քարտեզագրում բաժնում: Այժմ ընթանում են ՀԿ քարտեզագրման մեջ նոր ՀԿ-ների գրանցման աշխատանքները:

2014թ. դեկտեմբեր ամսին շրջանառության մեջ դրվեց ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգի նախագիծը: Ինստիտուտը կազմակերպել է **հանրային քննարկումների շարք**, որի շրջանակներում տարբեր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ քննարկվել են հայեցակարգի դրույթները: Արդյունքում մշակվել է առաջարկությունների փաթեթ, որը ներկայացվել է հայեցակարգի հեղինակային թիմին:

Ինստիտուտը նպատակ ունի նպաստել երիտասարդների մասնակցությունը, ինչպես նաև զարգացնել երիտասարդների կարողությունները կամավորության ինստիտուտի կայացման միջոցով: Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոնը 2013-ից հավատարմագրվել և միացել է Եվրոպական կամավորական ծառայության (EVS) մեծ ընտանիքին: EVS-ը 18-30 տարեկան երիտասարդներին թույլատրում է անվճար նեգրավվել կամավորական աշխատանքներում եվրոպական բոլոր երկրներում: Ծրագիրը հոգում է կամավորի ճանապարհաձախարհ, կեցության, առողջական ապահովագրության և սննդի բոլոր հարցերը, ինչպես նաև ամսեկան գրպանի գումար է հատկացնում: Ծրագիրը նպաստում է համերաշխության, փոխըմբռնման և հանդուրժողականության զարգացմանը երիտասարդների միջև՝ նպատելով հասարակական համախմբվածության ամրապնդմանը և երիտասարդների ակտիվ քաղաքացիությանը Եվրամիությունում: Աշխատելով համայնքի համար՝ լեզվի դասընթացի հնարավորություն, աշխատանքի մասով ոչ ֆորմալ կրթություն ու պրակտիկա ձեռք բերելու լավագույն տարբերակն է: Կամավորական աշխատանքի ավարտին փորձի ուսուցումն ու աշխատանքի հավաստիացումը պաշտոնապես ճանաչվում է Youthpass-ի միջոցով:

EVS ծրագիրը պահանջում է համագործակցություն 3 առանցքային դերակատարների միջև՝ ուղարկող կազմակերպություն, հյուրնկալող կազմակերպություն և կամավոր: Մեր պարագայում Հայաստանից ուղարկող կազմակերպության դերն ունենք նաև մենք, և սպասում ենք ակտիվ կամավորների:

Մեկուկես տարվա ընթացում **4 կամավոր Եվրոպայից** ընդունել ենք մեր երկիր, ինչպես նաև ուղարկել ենք կամավորներ:

Եվրոպական կամավորական ծառայությունը թույլ է տալիս երիտասարդներին իրականացնել կամավորական ծառայություն մինչև 12 ամիս ժամկետով: EVS ծրագրի կամավորները մասնակցում են տարբեր ոլորտների գործունեությանը (շրջակա միջավայրի պահպանություն, արվեստ և մշակույթ, երեխաներ, երիտասարդներ, ծերեր, սպորտ և այլն): Ծառայության ավարտին յուրաքանչյուր կամավոր ստանում է EVS վկայական:

EVS-ից զատ՝ Youth in action ծրագրի շրջանակում իրականացնում ենք նաև տարբեր կարճատև սեմինարներ ու ֆորումներ եվրոպական երկրներում: Ծրագրերի, հայտերի ու մյուս հնարավորությունների մասին տեղեկատվությունը Ինստիտուտը տարածում է Ինստիտուտի կայքէջի և ֆեյսբուքյան էջի միջոցով:

Ինստիտուտը հետազոտական գործունեության տարբեր փուլերում ներգրավվել է նաև տեղական կամավորների՝ 10 կամավորներ աջակցել են Ինստիտուտին հետազոտական աշխատանքներին:

- Ինստիտուտը դարձնել ակտիվ **հետազոտական և ակադեմիական կենտրոն**

Այս ուղղությամբ 2013-2014թթ ընթացքում իրականացվել են հետևյալ գործողությունները.

Ինչպես նշվեց արդեն Ինստիտուտը իրականացրել է 2 երիտասարդական ուսումնասիրություններ, հանրայնացրել դրանց արդյունքները, տպագրել զեկույցները: Կարևոր է նշել, որ երկու հետազոտությունների մեթոդաբանությունները մշակվել են Ինստիտուտի թիմի և հրավիրված փորձագետների մասնակցությամբ: Այսպես, զբաղվածության հետազոտության մեթոդաբանությունը մշակվել է Ինստիտուտի և ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի դոցենտ ս.գ.դ Մարիա Զալավսկայայի կողմից: Մեթոդաբանության մեջ ներառվել են երիտասարդների անկախության ինդեքսի չափման մեթոդաբանությունը:

ՀԿ քարտեզագրման վերաբերյալ հետազոտության մեթոդաբանությունը մշակվել է Ինստիտուտի թիմի և ՀԿ ոլորտի փորձագետ Տաթև Մարգարյանի կողմից:

Որպես հետազոտական կենտրոն, որն աշխատում է երիտասարդական ոլորտում՝ Ինստիտուտի թիմը պարբերաբար մասնակցում է կարողությունների զարգացման դասընթացների. Այսպես 2013-2014թթ ընթացքում թիմի անդամները մասնակցել են հետևյալ միջոցառումներին՝

### **Հայաստանում**

- ✓ Երիտասարդական քաղաքականություն
- ✓ Մասնակցային հետազոտություններ
- ✓ Վերլուծական մաթեմատիկական մոդելներ
- ✓ Քաղաքացիական հասարակություն. երկխոսություն հանուն առաջընթացի" ծրագիր
- ✓ PR ռազմավարություն
- ✓ Շահերի պաշտպանություն/շահերի բախում
- ✓ Մարդու իրավունքներ
- ✓ Բանակցություններ
- ✓ Event management
- ✓ PR սկզբունքներ
- ✓ Ծրագրի կառավարում

- ✓ Հետազոտության մշակում և կազմակերպում
- ✓ Թափանցիկ և հաշվետու կառավարում, ռազմավարական պլանի մշակում
- ✓ ՀԿ կառավարում. ծրագրերի մշակում և կառավարում, ֆոնդհայփայթում
- ✓ Երիտասարդների մասնակցությունը ՏԻՄ գործունեության մեջ

## Արտերկրում

- ✓ One day difference TC co-organizer, **Moldova**, October 2014
- ✓ **Entrepreneurship as a way to struggle unemployment, Poland**, February 2015
- ✓ YMCA Europe, Love2Live, **Czech Republic**, August 2013
- ✓ EVS hotspot meeting, **Poland**, September 2013
- ✓ The Eastern Partnership Youth Regional Unit, ToT, October, 2013, Minsk
- ✓ Black sea youth forum, **Russia**, November 2013
- ✓ From the Woods To Labor Market, **Lithuania**, October 2014
- ✓ Behavioral Science and Gamification, **Bratislava**, 2013
- ✓ SOHO, meeting for sending and hosting organizations, **Czech Republic**, March, 2014
- ✓ Leader in Volunteerland, **Ukraine**, May 2014
- ✓ Management effective methods, May, 2014, **Germany**

- Ձևավորել երիտասարդության հարցերով զբաղվող անհատների, խմբերի, կազմակերպությունների հետ համագործակցության **գործուն ցանց**

Ցանցի ձևավորմանն ուղղված 2013-2014թթ Ինստիտուտն իրականացրել է հետևյալ գործողությունները.

Ինստիտուտը մշակել և կայքէջի միջոցով հասանելի է դարձրել մոտ 400 ՀԿ-ի մասին տվյալներ: Հետազոտական աշխատանքներում Ինստիտուտը ներգրավվում է տարբեր ՀԿ-ների՝ համագործակցելով նրանց հետ որպես մարզերում խմբային քննարկումներ կազմակերպմանը աջակցող կառույցներ:

2015թ. Մարտ ամսից Ինստիտուտը բացվել է Free Space-ը: Free Space-ն անվճար է, կիրառվում է ոչ կոմերցիոն նպատակներով, հնարավորություն է տալիս երիտասարդներին իրենց աշխատանքային օրը կազմակերպել: Այն նաև հարթակ է երիտասարդական թրեյնինգներ, հանդիպումներ ու քննարկումներ անցկացնելու համար: Free Space-ի շրջանակներում Ինստիտուտում իրակացվում են դասընթացներ՝ փաստարկված երիտասարդական քաղաքականության վերաբերյալ: Ապրիլ ամսից սկսվում են SPSS դասընթացները:

## Գործունեության արդյունքներ

2013-2014թթ Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի գործունեության արդյունքներն են՝

- ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրների ուսումնասիրության **զեկույց, հայերեն և անգլերեն**, ԵՀԿ քարտեզագրման **զեկույց՝ հայերեն և անգլերեն**
- Երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրում եւ պետության կողմից ֆինանսավորվող երիտասարդական դրամաշնորհային ծրագրերի արդյունավետության գնահատում **զեկույց** հայերեն տարբերակով
- ՀԿ քարտեզագրում նախագիծ, համագործակցության հարթակ
- **EVS** հավատարմագրում
- **Կայք՝ [www.ystudies.am](http://www.ystudies.am)**
- FB պաշտոնական **էջ** (*1582 հետևող 07.04.2015թ. դրությամբ*)
- **Թիմ՝** 5 մշտական աշխատող, 2 փորձագետ, հետազոտական թիմի շուրջ 50 անդամներ (քանակական, որակական հարցազրուցավարներ, մուտքագրողներ և որակի ստուգողներ):